№ 113 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27 **1897** ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27 № 113

ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում ղրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւն բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ազգ. օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մարիամ Բարխուդարեանց և Յովհաննէս Պետրոսեանց խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինը իր թանկագին ամուսնու, և երկրորդը իր նախկին բարերարի

ԹԱԴԷՈՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ սեպտեմբերի 24-ին, և խնդրում են չնորհ բերել յուղարկաւորութեանը շաբաթ օրը, սեպտեմբերի 27-ին, առաւօտեան 10 ժամին, իրանց բնակարանից, Պոլիցիական փողոց № 15, տան Յովհաննէսեանցի, դէպի ս. Նշանի եկեղեցին, այնտեղից դէպի Խոջիվանքի գերեզմանատունը:
1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարիքը շարունակվում է. Մենք «մանեկեններ» չենք պաշտպանում. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Տրխուր յիշողութիւններ. Վ. Սարգսեի ճառը. Չը պէտք է քնել. Մասնակցութիւն. Նամակ Ղազախի գաւառից. Նամակ Գօրիսից. Նամակ Խմբագրութեան. ՆԵՐՔԻՆ լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Աստիները Պարսկաստանում. Ցունաստան. Կրետէի մահմեդականները. Ուր է Անգլէ. Նամակ Անգլիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մէլիքի աղջիկը:

ԿԱՐԻՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

—

Կովկասեան կառավարչապետի արամադրութեան տակ դեռ գտնվում է մի քանի տասնեակ հազար ռուբլի գումար, ժողովված Ռուսաստանի զանազան նահանգներից՝ Թիւրքահայ գաղթականների համար: Այս օրերս կառավարչապետը, տեղեկանալով, որ Թիֆլիսում գտնվող Թիւրքահայ գաղթականները կարօտութեան մէջ են, կարգադրեց յանձնել Թիֆլիսի ոստիկանապետին 2500 ռուբլի՝ գաղթականներին օգնութիւն հասցնելու նպատակով: Լսում ենք, որ ոստիկանապետը մտադրութիւն ունի քաղաքի մասերից մէկում բանալ ձրի ճաշարան գաղթականներին կերակուր մատակարարելու համար:

Այդ առիթով անհրաժեշտ ենք համարում ասել հետևեալը. գաղթականների հոսանքը ամենևին չէ դադարում, և ինչպէս երևում է թէ „Մշակի“ և թէ մամուլի ուրիշ օրգանների մէջ լոյս տեսած թղթակցութիւններից, պէտք է շարունակվի, քանի որ գաղթականութիւն առաջ բերող պայմանները նոյնն են մնում: Բացի դրանից Փոքր-Ասիայի նահանգները, թէև չենթարկվեցին անբերրիութեան, այնուամենայնիւ արդիւնաբերեցին քիչ հաց այն պատճառով, որ դաշտերի մի ընդարձակ տարածութիւն մնացել է անմշակ: Եթէ տեղական կառավարութիւնը հոգացած լիներ նպաստաւոր պայմաններ ստեղծել արտերը ժամանակին սերմանելու համար, այժմ Փոքր-Ասիայի գիւղերը կարող կը լինէին ոչ միայն իրանց հացով բաւականանալ, այլ և մի մասը վաճառել: Փաստը այն է, որ Թիւրքահայերի մի ստուար բազմութիւն մնացել է անապահով և կարիքի ծանր լծակին դարձեալ պէտք է դիմի Ռուսաստան՝ իր եղբայրակիցների օգնութեան: Դժբաղդաբար, ներկայ 1897 թուականը անբարեյաջող է նոյն իսկ Ռուսաստանի համար և մեր գիւղացիները, որոնք ամենայն պատրաստակամութեամբ տեղ էին տալիս գաղթականներին իրանց գիւղերում, այժմ պէտք է նեղվեն հիւրասիրութեան պարտականութիւնը կատարելուց:

Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը, այժմ աւելի ևս մեծ պարտականութիւն է դրվում թէ մեր հասարակութեան և թէ կառավարութեան տեղական օրգանների վրա, որոնց ձեռքում գտնվում են բարձրագոյն թոյլատրութեամբ հաւաքված փողերը: Անցեալ տարիները, երբ մեր հասարակութեան ունևոր մասը անհոգութեամբ էր նայում գաղթականներին օգնելու գործին, մեր գիւղական դասակարգը օգնում էր նրանց իրապէս՝ առանց աղաղակ բարձրացնելու, առանց իր նուիրած կոպէկների մասին հրապարակով յայտարարելու: Իսկ այժմ, երբ մեր գիւղացին ինքն էլ նախանձելի դրութեան մէջ չէ, մենք պարտաւոր ենք աւելի բարեխիղճ լինել, քան մինչև այժմ: Այդ հանգամանքի վրա ենք դարձնում կովկասեան կառավարութեան ուշադրութիւնը, մանաւանդ որ մի քանի անգամ սխալ յայտարարութիւններ են եղել, որ իբր թէ գաղթականները այլ ևս կարօտութիւն չունեն:

ՄԵՆՔ «ՄԱՆԵԿԵՆՆԵՐ» ՉԵՆՔ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ

—

Սխալվում է „Тифлисскій Листокъ“ լրագիրը, ենթադրելով „Մշակին“ տուած պատասխանի մէջ (№ 224), թէ մենք՝ պաշտպանելով քաղաքագլխի ընտրութեան գործում կուսակցական տեսակէտը, դրանով ուզում ենք ասել, որ կուսակցութեան թեկնածուն, քաղաքագլուխ ընտրվելուց յետոյ, պէտք է լինի իր ընտրող խմբի „մանեկենը“ նրա կոյր գործիքը: Մանեկեն և կոյր գործիք լինել որ և է խմբի, կամ կուսակցութեան ձեռքում, միշտ և ամեն տեղ՝ կը նշանակի անպիտան, անարժան պաշտօնեայ լինել: Այլ բան է կուսակցութեան ընտրելի լինել և այլ բան ընտրվելուց յետոյ այդ կուսակցութեան ձեռքում խաղալիք դառնալ: Եթէ որ և է ընկերութեան, կամ դումայի մէջ ընտրութիւն անելիս՝ կազմակերպվում են խելացի, գիտակցական կուսակցական խմբեր, տարբեր միմեանցից ոչ թէ անձնական և դասակարգային շահերով, այլ գաղափարներով և հասարակական տեսակէտներով, և ընտրում են այս և այն մարդուն, իբրև կուսակցական հայեացքներին համապատասխանող անձ,—այդ դեռ չէ նշանակում, որ ընտրող կուսակցութիւնը իրաւունք ունի պահանջելու, որ իր թեկնածուն ընտրվելուց յետոյ իր կոյր հետևողը լինի, և կամ ընտրվածը պարտաւորվի, իբրև պաշտօնեայ՝ կուրօրէն ականջ դնել իր ընտրողների թելադրութիւններին... Դա կը լինէր ոչ թէ կուսակցութիւն, այլ անբարոյական շահամոլների մի խումբ, որ հասարակական գործունէութեան անուան տակ փորձում է մութ նպատակների ծառայել...

Ով և լինի Թիֆլիսի առաջիկայ քաղաքագլուխը, ո՛ր կուսակցութիւնը և տանի հոկտեմբերի 6-ին յաղթութիւն, թէ ընտրվածը և թէ ընտրողները պէտք է միշտ յիշեն, որ ընտրութիւնից յետոյ յարաբերութիւնները բոլորովին այլ կերպարանք պէտք է ընդունեն.—ընտրողները պէտք է նայեն իրանց թեկնածուի վրա արդէն իբրև քաղաքագլխի վրա, որ ներկայացուցիչ պէտք է լինի ամբողջ դումայի և ոչ թէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ

—

Նա կանգ առաւ, որովհետև նրան այնպէս թուաց թէ մէլիքի այրին պարզ չէ հասկանում այդ խօսքերը:

—Հասկանում ես, ասաց նա:

Անոնա-խաթունը լաւ էր հասկանում. այժմ նա լսում էր կոյսին հանգիստ կերպով, նոյն իսկ բաւականութեամբ:

—Կրկնում եմ, աշխարհը չէ կարող դուրս գալ աստուածային օրէնքներից: Բայց օրէնքները միմիայն ժողովրդի համար չեն գրված, և աշխարհի վրա ոչ ոք մեղաւոր չի լինի, թէ ինքդ գնաս և քո յօժար կամքով հրէշի բերանն ընկնես: Դու գիտես, որ մեր երկրի պատիւը քո տանն է դրված. այստեղից է դուրս գալիս ժողովրդի ուրախութիւնն ու դառնութիւնը: Շատ զգոյշ պիտի լինի այս տունը... Ծառի ամենաբարձր ճիւղի ծայրին հասած պտուղը շատ դաւիչ է լինում. կարծում են թէ նրա մէջ կայ մի առանձին համ ու քաղցրութիւն, որ չունեն ցած ճիւղերի պտուղները: Դա, ի հարկէ, ճիշդ չէ. ցած ճիւղերի վրա եղածները շատ անգամ աւելի գեղեցիկ և համեղ են լինում: Բայց ինչու աչքը միշտ վերևն է նայում և ախորժակը ամենից շատ զրգռողը վերևինն է:—Որովհետև նա բարձր է ամենքից, անմատչելի է: Այսպէս է և քո տունը: Բարձր ես, ուրեմն և ախորժելի ես: Եւ որպէս զի ամեն մի պատահածի բերանը չընկնես, պիտի պինդ պահվես քո բարձրութեան վրա, աւելի անմատչելի դառնաս:

Պատասխան չեղաւ. բարձր ճիւղի պտուղը լռութիւն պահպանեց: Կարճ միջոցից յետոյ կոյսը էլի խօսեց: Եթէ բաւական չէ այդքանը, նա կը բերէ ուրիշ օրէնքներ, ուրիշ խօսքերով կապացուցանէ թէ ինքը լաւ է հասկանում աշխարհի օրէնքները: Թող Անոնա-խաթունը լաւ իմանայ, որ ինքը, այդ կոյսը, թէև մազերը սպիտակացրել է աշխարհից հեռու, վանքի պատերի մէջ, բայց տեսել ու լսել է շատ բան, կարդացել է աւելի շատ, և երկար մտածել է կարդացածի վրա:

Բայց աւելորդ էին այդ բացատրութիւնները: Մէլիքի այրին արդէն զինաթափ էր դարձել: Գիտէր որ շատ ճիշդ է ծառի և հասած պտուղի օրինակը: Եւ յայտնեց իր շնորհակալութիւնը, աւելացնելով որ մահկանացու մարդը առանց սրխալների չէ, մանաւանդ երբ մենակ է, իսկ ժամանակը այսքան չար:

—Եղածը եղել է պրծել, հառաչեց նա.—այսուհետև Աստուած է մեր յոյսը:

—Անպատճառ, հաստատ կերպով արտասանեց Հեղինէն.—Աստուծու փէշը երբէք չը պէտք է բաց թողնել:

Այժմ նա, իր մեղադրանքը հաստատելուց յետոյ, փոխեց իր դէրը և սկսեց սիրա տալ իր խօսակցին:

—Երկար չեն քո նեղութեան օրերը: Գայիանէն այստեղ հիւր է և երբ դուրս կը գնայ այս տանից, դու ազատված կը լինես անպէտ ցաւերից:

Եւ նա խօսք սկսեց հարսանիքի մասին: Ինչու չեն վերջացնում, ինչու են այսքան յետաձգում:

Նա, իրբև մէլիքի տան մօտիկ բարեկամ, լաւ գիտէր բոլոր հանգամանքները: Կէս տարի առաջ, բարեկենդանի առաջին օրերում, տեղի ունեցաւ Գայիանէի և Զալալի նշանադրութիւնը: Այդքան անշուք ու խեղճ հանդէս չէր տեսել նոյն իսկ վերջին աղքատի խրճիթը Աժառանոցում: Դրրսից եկել էին միայն փեսացուն, նրա մայրը և Մէլիքի-Աւանը: Քահանան օրհնեց մատանին, Անոնա-խաթունը արտասուք թափելով ընդունեց չնորհաւորութիւնները և համբուրեց իր փեսայի ճակատը: Մէլիքի-Աւանի կարգադրութեամբ էր այս նշանադրութիւնը այսքան լուռ ու մունջ, համարեա ախուր: Նա չէր թոյլ տուել, որ խաչէնի մէլիքը դայ իր որդու ուրախութեան, որպէս զի ամուսկ չը լինի և Սիւլէյման բէկը ոչինչ չիմանայ: Անշուք, աղքատիկ նշանադրութիւնը մի նոր ցաւ դարձաւ Անոնա-խաթունի համար: Բայց ինչ կարող էր անել:

Հարմարաւորութեան պայմանների վրա վէճ չեղաւ: Անոնա-խաթունը չէր կարող զրկել Գայիանէին, որ հօր սիրած ու պաշտած զաւակն էր. ինչպէս վայել էր Վարանդայի մէլիքի դիրքին, նա առաւ, նոյն իսկ չափազանց առատ բաժինք նշանակեց: Իր կողմից Զալալի մայրը պատասխանեց նոյնպիսի առատաձեռնութեամբ: Կարգ էր, որ փեսան իր աներոջը մի յայտնի տուրք պիտի տար և ապա պսակվէր: Այդ տուրքը մի և նոյն ժամանակ ցոյց էր տալիս թէ փեսան ինչպէս է գնահատում իր նշանածին: Խաչէնի մէլիքի կինը այնպիսի մի գումար առաջարկեց, որ Անոնա-խաթունը միանգամայն զոհ մնաց. Գայիանէին չատ բարձր էին գնահատում. այդպիսի կին չը կար մէլիքների ընտանեկան ատանդութիւնների մէջ:

Բայց հարսանիքը յետաձգվեց, որովհետև հարսնախօսութեան մի այլ պայմանը հեշտ չէր կատարել. Խաչէնում այդ ժամանակ խռովութիւններ էին սկսվել Մէլիք-Գրիգորի և նրա կրտսեր եղբօր մէջ: Վերջինս պահանջում էր Խաչէնի մի նշանաւոր մասը և սպառնում էր վէճը կռուի հասցնել եթէ իր եղբայրը յօժար կամքով չը տայ իր ուղածը: Այդ նպատակով էլ նա յարաբերութիւն էր սկսել վրաց մի յայտնի ազնուականի հետ, որ մեծ նշանակութիւն ունէր վրաց արքունիքում: Ղարաբաղի մնացած մէլիքները սաստիկ հակառակ էին մէլիքի եղբօրը, որ բացարձակ անիրաւութիւն էր գործում և ձգտում էր խլել Մէլիք-Գրիգորից Խաչէնի իշխանութիւնը: Նրանք կարող կը լինէին զսպել այդ ըմբոստին, եթէ Մէլիք-Աւանը չը նախատեսնէր թէ ինչ վատագ կայ այդ կռուից: Նա նիստել էր, որ մէլիքի եղբայրը ուզում է բարեկամանալ օսմանցիների հետ, իսկ դա մի նոր աղէտ կը դառնար Ղարաբաղի համար: Թէև օսմանեան տիրապետութիւնը տարածված էր ամեն տեղ, բայց հայերից ոչ ոք դեռ չէր փորձել անցնել նրանց կողմը և Սարը-Մուստաֆա փաշան իզուր էր աշխատում աջակցութիւն որոնել զանազան կողմերի հայերի մէջ: Խռովութիւնը պահանջում էր չը դրդռել անբաւական տարրերը: Այդ պատճառով դերակշիռ հանգիստացաւ երկու եղբայրներին հաշտեցնելու միտքը. մէլիքները այդ գործը յանձնեցին Երիցմանկանց վանքի Ներսէս կաթողիկոսին: Իրերի այդ դրութեան մէջ Անոնա-խաթունը չէր կարող անտես առնել այն հանգամանքը, որ Մէլիք-Գրիգորը գուցէ հարկադրված կը լինի կամ կատարել իր եղբօր պահանջը կամ, պաշտպանելով իր իրաւունքը, ներքին երկպառակութիւնների մատնել Խաչէնը: Երկու դէպքում էլ անկատար էր մնում Մէլիք-Յուսէինի կտակը. երկու դէպքում էլ Գայիանէի հարսանիքը չէր կարող պաշտպանական կապ հաստատել Վարանդայի և Խաչէնի մէջ: Ուստի Անոնա-խաթունը պայման դրեց, որ հարսանիքը կատարվի միայն այն ժամանակ, երբ վերջնական հաշտութիւն կը կայանայ երկու եղբայրների մէջ:

—Շուտ կը լինի այդ հաշտութիւնը, հարցրեց Հեղինէն:

—Յայտնի չէ, գոնէ Զալալը չէ հասկանում թէ ինչեր են կատարվում: Ներսէս կաթողիկոսը, ինչպէս երևում է, շատ չէ շտապում: Ինչպէս ասում են, նա իր հաշիւներն ունի: Եւ դա շատ հասկանալի է:

—Հաշիւնե՞ր:

—Այո: Ինձ ասացին որ նա աշխատում է իր քրոջ աղջկան դարձնել Խաչէնի մէլիքի հարս:

—Այսինքն Գայիանէի տեղը:

—Ի հարկէ: Այդ բանը գիտեն շատերը, որոնց թւում և մէլիքը:

—Զալալն էլ գիտէ:

—Հաստատ չեմ կարող ասել: Պէտք է խորհանեմ որ նրա սիրտն այստեղ է, այդ պատճառով էլ չափազանց շատ շատ է գալիս մեր տունը: Եթէ ծեծեա էլ, մեր տունից չի հեռանայ:

—Եւ Գայիանէն էլ ի հարկէ...

—Աւելորդ է ասել: Հարցրու Մէհրիին թէ ինչեր են տեղի ունեցել Վարդավառի օրը: Երբ նա

-ի յուշնով մը կվճարեն վր ոչա ռ։ Կուռ վեր-
-ոս գրաֆեանն ու կվան վճարաժին Ազգերա-
-տուն մը յուրաքանչիւր մարդու մը ամ
ոչ մեկ մեկ ձ Կոշտ Հեղինա—«Կոչեց ի Ծոնվ»։
-յուրքիան մը գրաբիանցի ազգերու Ազգ-
-ոս մեկ ձ Կոշտ Հեղինա—«Կոչեց ի Ծոնվ»։
Եկա ոչոր Ազգի մեկով ամ Ազգերա-
-ի մը Ազգերաբերեալ Ազգերաբերեալ
Ազգերաբերեալ մը Ազգերաբերեալ մը
Ազգերաբերեալ մը Ազգերաբերեալ մը
Ազգերաբերեալ մը Ազգերաբերեալ մը

ոգեղիտալ ամբ մակ մ՝ վայրաց ամբ մ՝ գլխաց
-գտ ամ—ելիտաս վերջբուտաց մեկտաց նուտաճ
վրցմաց մի նգնուտպ ելիելուտ նոլտալչպաց կով
ՀՆ վիճամբ վանակ գլխակ մ՝ ծուտս մեկրգիտվ
-գտ վերբիտաս ատվա վերտ նգուտ մ՝ նամակ
ՄՂ։ ՀՆուՆտաս վր գլրտ գլովիտալ վր գլր
-տ վանդ գլովիտամեմատաց գլխամ վր ելիտաս
-ատաց ՀՆր ամբ վատաս ՀՄի գլոգիտամեմատաՀՆ
ամբ իանդրգամ մ՝ գլովիտամեմ՝ մ՝ գլրտիտաց
-ատամ մ՝ գլովիտամեմատաՀՆ գլոգիտամ գլրտ ելիտ
-ատամ գլոգ

-ձև դր եղտոնո ես Ի ես դատա նմեռա ժօՄՈ
դի-20 վերջդտեղտ տոփտտոնՈ

—

ՋԵՍՏՈՎՈՆ ՎԱՈՇՈՆ ԿՈՌՈՂ

Ի՝ մատատկոնս դեկտ
Ռ. տՈ

-տա նվրնակ վեռիկդեկտ դեկտատեռատ ՄԵՄԻԼ
ՍՏԻՆԵՄՈՆ ՄԻ ՄԻԳՈՍ ԴԵՎԵՍՎ ԻԱՏՄՈ
։ՆՎ

ԳՈՏՈՂՎՍՑ

Ուշադրությունս գրավեց մի նշում, որ հատուկ է Նոր Դարի ոգուն։ Ամերիկայի Ֆիլադելֆիա քաղաքում մի ընկերություն կազմվել է, որի նպատակն է ամեն տարի 8,000 դոլար ստանալ։ Ինչպես գրում է «Դաիլի Նեուս», ընկերությունը ունի հետևյալ նպատակը։ Ամեն տարի ընտրվում է մի գեղեցիկ աղջիկ, որին ընկերությունը հագցնում է ամենաշքեղ զգեստներով, զարդարում է ամենաթանկագին գոհարներով, ապահովագրում է ամենամեծ գումարներով, ապա ուղարկում է Եվրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա, ամենուր, որտեղ ապրում են ամենաանբարոյական, ամենաանարգ մարդիկ։ Ինչպես գրում է «Դաիլի Նեուս», ընկերությունը հաշվարկում է, որ ամենաանարգ մարդիկ ամենուր ամենաանարգ մարդիկ են, ուստի ամենուր ամենաանարգ մարդիկ ամենուր ամենաանարգ մարդիկ են։ Ինչպես գրում է «Դաիլի Նեուս», ընկերությունը ունի հետևյալ նպատակը։ Ամեն տարի ընտրվում է մի գեղեցիկ աղջիկ, որին ընկերությունը հագցնում է ամենաշքեղ զգեստներով, զարդարում է ամենաթանկագին գոհարներով, ապահովագրում է ամենամեծ գումարներով, ապա ուղարկում է Եվրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա, ամենուր, որտեղ ապրում են ամենաանբարոյական, ամենաանարգ մարդիկ

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մանելով Տրապիզոն, Սամսուն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի 1/13 հոկտեմբերի ՍԻՐԿԱՍԻ շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԿ: Եւ այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Դարբէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. նախկին Արծրունու քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կոլիւբակինսկայա հրապարակ: ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելիքիոր Հերշենզոնին: (№ 76) 11—20

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՍՏԱՑՎԵՑ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԱԾ „ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ“

եռաձայն և քառաձայն:

Գինը—1) Պարտիտուրի՝ 10 ռուբլի, (ճանապարհածախս 8 ֆունտի). 2) Չորս ձայներինը (սոպրանո, ալ'տ, տէնոր, բաս), չորս տետրակում՝ 10 ռուբլի. (ճանապարհածախս 7 ֆունտի):

Դիմել՝ Մ. Եկմալեանին, ԹԻՖԼԻՍ, Ներսիսեան դպրոց: (№ 104) 4—5

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ

ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

(Սօլօլակ, Սաղօվայա փող., տուն № 46, Տէր-Մելքսէթովի)

Մանուկների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից: Ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ից

(№ 97) 10—10

ԲԱԳՈՒ

Ուսումնարան Ա. Բաբալեանի

Ընդունվում են երեխաներ գիմնազիայի, ըէալական և այլ դպրոցների համար պատրաստելու:

Հասցէն՝ Старо-почтовая փողոց, տուն Հաջի-Նէյմաթի: (№ 94) 12—15

ԽԱՂՈՂԻ ՄԱՄՈՒԼՆԵՐ,

ԽԱՂՈՂ, ՄԱՆՐԱՅՆՈՂ, ԿՈՊ ՀԱՆՈՂ, ԿՈՒՊԱՖԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ, ՇԻՇԵՐ ԼՈՒԱՆԱԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Առաջարկում է

ԻՆՖԵՆԵՐՆԵՐ

ԵԱՐԱԼՕՎԻ ԵՒ ԱԼԻԽԱՆՕՎԻ

Մեքենայագործարանը,

Թիֆլիսում Ալէքսանդրեան փողոց, սեփական տուն:

(№ 102) 6—0

ԿՏԱՒԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

(Բամբակի մանուածքի)

ԺԱՌԱՆԳՈՒՀԻՆԵՐԻ Յ. ՉԻԹԱԽԵԱՆԻ

(Հիմնված է 1869 թ.)

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

ԿՏԱՒ ՍՈՎՈՐԱԿԱՆ 15—30 ՎԵՐՇՈԿ ԼԱՅՆՈՒԹԵԱՄԲ
ԿՏԱՒ I ՏԵՍԱԿԻ 15—30 » »
ԿՏԱՒ ՀԱՍՏ » 12—30 » » (մասնաւոր պատուէրներով)

ԹԵԼ ԿԾԻԿՆԵՐՈՎ
ԹՈՎ ԲԱՄԲԱԿԻ ԹԵԼԻՑ 1/4"—3" ՀԱՍՏՈՒԹԵԱՄԲ
ԹԵԼԻ ԾԱՅՐԵՐ (пакля) ՄԵԲԵՆԱՆԵՐ ՄԱԲԲԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԲԱՄԲԱԿ ՄԱԲԲԱԾ (вата) I ՏԵՍԱԿԻ
ԲԱՄԲԱԿ ՄԱԲԲԱԾ II »
ԲԱՄԲԱԿ ԹԵՐԹԵՐՈՎ I ՍՈՍԻՆՁՈՎ (մասնաւոր պատուէրներով)
ԲԱՄԲԱԿ ԹԵՐԹԵՐՈՎ II » ՆՇՇՏՈՎ

Առաջարկում ենք պ.պ. վաճառականներին և գործածողներին ուշադրութիւն դարձնել մեր գործարանում պատրաստվող կտաւի ամրութեան և ներկեր ընդունելու յատկութեան վրա և չը չփոթել Ռուսաստանից եկած կտաւների հետ:

Կտաւի նմուշները և պրէյսկուրանտները ուղարկվում են ըստ առաջին պահանջման ձրիաբար:

Հասցէն՝ Тифлисъ, главная контора фабрики. Уголъ Нагорной и Сергіевской ул. собс. д. телефонъ конторы 266, а фабрики 24. (յ. ե.) (№ 78) 21—50

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՑԼՏՈՒԹԵԱՄԲ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ծրագիր. 1) առևտրական թուաբանութիւն. 2) կրկնակի հաշուապահութիւն ՆԱԻԹԱՅԻՆ—ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ, առևտրական, բանկային և այլն. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) վայելչագրութիւն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ, ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՑ

Բազու, Տատարսկայա փողոց, տուն № 30.

Կուրսերի հիմնադիր՝ Ա. ՏԷՐ-ԴԱՍՊԱՐԵԱՆ

Վաճառվում է հիմնադրի նոր գիրքը,

„КРАТКІЕ ОЧЕРКИ ПО НЕФТОПРОМ.-ЗАВОДСКОМУ СЧЕТОВОДСТВУ“

(№ 83—հ. յ.) ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 18—20

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երեխեկ, կիսամթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ: Պատրաստում է գիմնազիաների, կադետների կօրպուսի, զեմլէմերների, ըէալական և այլ ուսումնարանների համար:

Փոքր պատրաստականում երեխաները ընդունվում են առանց քննութեան, վեց տարեկանից սկսած: Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումնաւարտած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ: Աւանդելի առարկաներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց, վրաց լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն (ռուսաց և ընդհանուր) բնական գիտութիւն, նկարչութիւն, գրութիւն, երգեցողութիւն:

Հասցէն. ТИФЛИСЪ, Гановская ул., № 11. 3-րդ գիմնազիայի մոտ:

(№ 102) հ.) 3—10

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒԻ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են *ատեստատներ:*

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական գիտութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիպօնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նադօրնայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(ե. շ.) (№ 76) 17—25

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պայմանի առաջարկել:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան:

Բ.) Առևտրական թուաբանութիւն.

Գ.) Առևտրական նամակագրութիւն.

Դ.) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղութիւն:

Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սաղօվայա փողոց, տուն Մարքարովի, № 27:

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծավալում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիզէկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում: ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ:

Օտարաքաղաքացիները դիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստայի ծախս վճարելու: (Ե. հ.) (№ 76) 20—21

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մահ մկներին, խլուրդներին և ուրիշ կրծողներին Այս միջոցը արտաքսում է այդ կենդանիներին գլխաւորապէս բնակարաններից, այնպէս որ նրանք չեն մնում գեռնայարկի տակ և չեն տարածում գարշահոտութիւն:

ՄԼԱԿՆԵՐԻ ԴԷՄ ՀԵՂՈՒԿ ոչնչացնում է նրանց ընդմիշտ: Նա չատ հաճելի հոտ ունի և բիծ չէ թողնում ճերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա: Փոշիացնելով նրան, սենեակի օդին հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանճը և մոծակները:

ՓՈՇԻ՝ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենայարմար միջոցն է բոլոր միջատները և նրանց սաղմերը բոլորովին ոչնչացնելու համար: Այդ փոշին անփոխարինելի է լուեր և մլակներ ոչնչացնելու համար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային պատերում: Ոչնչացնելով ցեցը և չունենալով նաֆթալինի անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մորթեղէն իրերը պահելու համար: Փոշու ազդեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջատների, մրջիւնների դէմ—գրեթէ վայրկենական է—հետևանքը զարմանալի: Հարցնել դեղավաճառական խանութներում:

(№ 76) 44—50

Մ. ՉՄՇԿԵԱՆԻ

„ԾՈՑԻ“ „ՊԱՏԻ“ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ 1898 Թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

շատով լույս կը տեսնեն: Ցանկացողները՝ այժմեանից յայտնելու են, որպէս զի պատուէրները ժամանակին կատարվեն: Իսկ տպագրվելի յայտարարութիւնները թող չուապէն չուտ հասցնելու:

7—13 (Ա. հ.) (№ 105) Հասցէն՝ ԹԻՖԼԻՍ, Մակար Չմշկեան

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Сентября 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.